ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանը՝

- 2015թ. ինդեքսում 35 միավորով զբաղեցնում է 95-րդ տեղը 168 երկրների շարքում
- Նախորդ տարվա համեմատ դիրքը նահանջել է 1 տեղով, իսկ միավորը նվազել է 2-ով
- Ըստ տարածաշրջանի ընդգրկված է Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խմբում (19 երկիր), որտեղ զբաղեցնում է 8-րդ տեղը
- 2015թ. Հայաստանը գնահատվել է 5 աղբյուրների կողմից, որոնցից առավելագույն միավորը (45) տրվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից, իսկ նվազագույնը (28)՝ Բերտելսմանի հիմնադրամի կողմից

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ)՝

- Հրապարակվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային ոչ պետական կազմակերպության կողմից
- 2015թ. ինդեքսը ներառում է 168 երկիր, 2014թ. 175-ի փոխարեն
- Գնահատում է մասնավոր հատվածի և փորձագիտական շրջանակի ընկալման մակարդակը հանրային հատվածում կոռուպցիայի վերաբերյալ
- Հաշվարկվել է 12 տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա
- ԿԸԻ-ում ընդգրկվելու համար երկիրը պետք է գնահատված լինի առնվազն 3 տարբեր աղբյուրների կողմից
- Միավորները 0-100 միջակայքում են, 0-ն ցույց է տալիս կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 100-ը՝ ամենացածրը
- Գնահատումը հիմնված է նախորդ 2 տարիներին հավաքագրված տվյալների վրա

Կոռուպցիայի ընկալման 2015թ. ինդեքսի աղբյուրները՝

1. Աֆրիկյան զարգացման բանկ, Երկրի կառավարման վարկանիշներ 2014
2. Բերտելսմանի հիմնադրամ, Կայուն կառավարման ցուցանիշներ 2015
3. Բերտելսմանի հիմնադրամ, Փոխակերպման ինդեքս 2016
4. «Էկոնոմիստ» հետազոտական միավոր, Երկրի ռիսկայնության վարկանիշներ 2015
5. Ֆրիդոմ Հաուս, Անցումային երկրներ 2015
6. Գլոբալ Ինսայթ, Երկրի ռիսկայնության վարկանիշներ 2014
7. Մենեջմենթի զարգացման միջազգային ինստիտուտ, Համաշխարհային մրցունակության տարեգիրք 2015
8. Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվություն, Ասիական հետազոտություն 2015
9. Քաղաքական ռիսկի Ծառայություններ, Երկրի ռիսկայնության Միջազգային ուղեցույց 2015
10. Համաշխարհային Բանկ, Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում 2014
11. Համաշխարհային տնտեսական ֆորում, Ղեկավարների կարծիքի հետազոտություն 2015
12. Համաշխարհային Արդարադատության Ծրագիր, Օրենքի գերակայության ինդեքս 2015

2012թ. կատարված մեթոդաբանական փոփոխությունները թույլ են տալիս 2015թ. տվյալները համադրել միայն 2012-2014 թթ. տվյալների հետ:

2015թ. Հայաստանը գնահատած 5 կազմակերպություններից Համաշխարհային տնտեսական ֆորումը ավելացրել է Հայաստանի միավորը 2-ով, իսկ Քաղաքական Ռիսկի Ծառայություններ կազմակերպությունը՝ 10-ով: Բերտելսմանի հիմնադրամը նվազեցրել է Հայաստանի միավորը 12 կետով, իսկ մնացածները պահպանել են 2014թ. տրված գնահատականները:

2015թ. Համաշխարհային Բանկը Հայաստանի համար գնահատական չի ներկայացրել:

Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խմբում (19 երկիր), Հայաստանը զբաղեցնում է 8-րդ տեղը:

Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խումբը գլխավորում է Վրաստանը:

Հայաստանը զբաղեցնում է առաջին տեղը ԱՊՀ երկրների շարքում: Հարևան երկրներից Հայաստանը զիջում է Վրաստանին և Թուրքիային, զգալիորեն առաջ է Ադրբեջանից և Իրանից:

Հայաստանի դիրքը ԿԸԻ-ում



Տարբեր աղբյուրների կողմից Հայաստանին տրված միավորները

	2014	2015	Փոփոխությունը
Կոռուպցիայի ընկալման ինդեքսի միավոր	37	35	-2
Բերտելսմանի հիմնադրամ	40	28	-12
Ֆրիդոմ Հաուս	37	37	0
Գլոբալ Ինսայթ	32	32	0
Քաղաքական Ռիսկի Ծառայություններ	21	31	10
Համաշխարհային Բանկ	47	-	-
Համաշխարհային տնտեսական ֆորում	43	45	2

ԿԸԻ միավորների համեմատական պատկերը



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներ



ԱՊՀ երկրներ

Հարևան երկրներ